Արձանագրություն N 3

ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Ալավերդի 12. 08. 2022թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ)	Ա.Վարոսյան
Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ)	Ռ.Միքայելյան,Ա.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ)	Հ. Շալաղոյանը, Կ.Կոնինյանը
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ.Քառյանը

1. Գնահատման նիստի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով հրավերի 8.7 կետի պահանջները ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 գնման ընթացակարգի մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների 2022թ. օգոստոսի 12-ին, ժամը 10.30-ին, որը տևել է 10 րոպե և տեղի ունեցել ք.Ալավերդի,Զ.Անդրանիկ 8/1 հասցեում:

1.2 ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած և բավարար գնահատված <<Վիգիշինա>> ՍՊԸ -ի մասնակցին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվել է բանակցությունների վարման նիստի օրվա,ժամի և վայրի մասին:

1.3 Գնահատող հանձնաժողովի բանակցությունների կազմակերպման նիստը շարունակվեց 12.08.22թ. ժամը 10:30: Մասնակցում էին հանձնաժողովի անդամներ՝ Ա.Վարոսյանը, Ա.Հովհաննիսյանը, Ռ.Միքայելյանը, Հ.Շալաղոյանը, Կ.Կոնինյանը և նիստի քարտուղար Լ.Քառյանը:

Բանակցություններին ներկա մասնակիցներն էին՝ <<Վիգիշինա>> ՍՊԸ -ն:

Նիստին ներկա մասնակիցների հայտով առաջարկած գների նվազեցման նպատակով կազմակերպված բանակցությունները սահմանելով 10 րոպե տևողությամբ միաժամանակյա բանակցությունների վերջնական գներն են

<<Վիգիշինա>> ՍՊԸ				
Հ/Հ	Անվանումը	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման աշխատանքների ձեռք բերում	99916660	19983332	119899992

Ընդունվել է որոշում՝ Կողմ-5,Դեմ-0:

7.Հանձնաժողովը որոշեց՝

7.1 <<Վիգիշինա>> ՍՊԸ -ի կողմից ներկայացվել են հրավերով սահմանված փաստաթղթեր՝ հրավերի պահանջներին համապատասխան և գնահատվել են <<Բավարար>>:

7.2 Ընտրված մասնակից ճանաչել <<Վիգիշինա>> ՍՊԸ -ին:

7.3 Ընտրված մասնակից <<Վիգիշինա>> ՍՊԸ –ին պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովումը, գնման գնի 10 /տաս/ տոկոսի չափով միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով և որակավորման ապահովումը գնման գնի 30 /երեսուն/ տոկոսի չափով, միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ներկայացվում է պայմանագրի ապահովում գնման գնի 10/տաս/ տոկոսի չափով կանխիկ փողի կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների ձևով, որակավորման ապահովումը գնման գնի 30 /երեսուն/ տոկոսի չափով կանխիկ փողի կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների ձևով

7.4 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

7.5 Հաստատել ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասի

8.1 ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/3 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10.00-ին Ալավերդու համայնքապետարանում, ք. Ալավերդի Զորավար Անդրանիկ 8/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ Կողմ-5,Դեմ-0:

Հանձնաժողովի.

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ) Ա.Վարոսյան

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) Ա.Հովհաննիսյան

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) Ռ.Միքայելյան

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) Հ. Շալաղոյան

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) Կ.Կոնինյան

Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀ) Է.Քառյան